# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ, ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ԸՆԿԵՐՆԵՐ

Ցավն ու երկյուղը Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ճակատագրի համար թելադրում են կրկին Հայկական ԽՍՀ կուսակցական ու պետական ղեկավար մարմիններին, մայր Հայաստանի ժողովրդին դիմելու անհրաժեշտությունը:

Վերջին ժամանակների իրադարձությունները մեզ համոզում են, որ Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը փորձում են բոլոր արդար և անարդար միջոցներով փակուղի մտցնել: Այն հույսերը, որ մենք կապում էինք ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի գործունեության հետ, ցավոք, չարդարացան: Կոմիտեի երկակի խաղը ի սկզբանե ձախողման էր դատապարտված: Ադրբեջանի ղեկավարությունը կոպտորեն ու առանց քաշվելու միջամտում է Լեռնային Ղարաբաղի գործերին, լկտիաբար մեկը մյուսի հետևից ապօրինի գործողություններ ձեռնարկում՝ չնայած քաղաքային ու շրջանային կուսակցական ու խորհրդային մարմինների բողոքներին: Ըստ որում, այդ ամենը կատարվում է ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի լուռ համաձայնությամբ: Սկզբում Լեռնային Ղարաբաղի քաղաքական պրոբլեմը հանգեցվեց մարզի սոցիալ-տնտեսական վերափոխություններին: Իսկ այժմ էլ պարզվում է, որ մարզի սոցիալ-տնտեսական վերափոխությունը լոկ ադրբեջանական գյուղերի սոցիալ-տնտեսական վերափոխությունն է, մարզի ինտենսիվ ադրբեջանականացումը:

Ստեղծված իրադրությունում մենք, ցավոք, զրկված ենք մայր Հայաստանի օգնությունից՝ և բարոյական, և նյութական: Մի՞թե Հայաստանի օգնությունը Լեռնային Ղարաբաղին դա միայն եզակի համերգների կազմակերպումն է կամ առանձին կոոպերատիվների բացումը: Այն դեպքում, երբ միութենական բոլոր մարմինների կողմից ԼՂԻՄ-ի վերաբերյալ ընդունված որոշումներում որոշակի պարտականություններ են դրված նաև Հայկական ԽՍՀ-ի վրա:

Այդ նույն ժամանակ Ստեփանակերտի շուրջը աներևակայելի արագությամբ ամրապնդվում են ադրբեջանական բնակավայրերը, զարգացվում նրանց միջև ճանապարհների ցանցը: Դժվար չէ, հավանաբար, հասկանալ, թե ինչպիսի հեռուն գնացող նպատակներով է այդ ամենն արվում:

Եվ կրկին, այս էլ արդեն քանիերորդ անգամ, փոքրիկ Արցախը իր պայքարում մեն-մենակ է մնում Ադրբեջանի դեմ: Մենք համոզված ենք, որ Հայաստանի ժողովուրդը հանրապետության ղեկավարության մեղքով անտեղյակ է Լեռնային Ղարաբաղում գործերի իրական վիճակին: Հակառակ դեպքում հազիվ թե մենք մեն-մենակ մնայինք՝ առանց օգնության ու պաշտպանության:

Մենք գիտակցում ենք, թե ինչպիսի դժվարին պրոբլեմներ են կանգնած Հայաստանի ղեկավարության ու ժողովրդի առաջ՝ ավերիչ երկրաշարժի կապակցությամբ: Եվ այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղի հայազգի բնակչության անունից դիմելով ձեզ, թախանձագին խնդրում ենք, օգտագործելով միութենական հանրապետության սուվերեն իրավունքները, կասեցնել ԼՂԻՄ-ի նկատմամբ Ադրբեջանի անօրեն գործողությունները, ամենաեռանդագին միջոցները ձեռնարկել՝ ուղղված ղարաբաղյան պրոբլեմի արդարացի լուծմանը:

Խաղաքարտի վրա է դրված մեր ժողովրդի ճակատագիրը: Գուցե վաղը ուշ լինի: Դրա պերճախոս վկայությունն է Նախիջևանը: Եվ թող հայազգի յուրաքանչյուր ներկայացուցիչ իր ընտրությունը կատարի այս վճռական ու կրիտիկական ժամին:

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, ԱԱՏՄ գլխավոր դիրեկտոր
ԴԱԴԱՄՅԱՆ Բ. Վ.

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ
ՊՈՂՈՍՅԱՆ Հ. Ա.

Հատուկ կառավարման կոմիտեի անդամ
ԹՈՎՄԱՍՅԱՆ Վ. Հ.

Հատուկ կառավարման կոմիտեի անդամ
ԲԱԲԱՅԱՆ Ս. Հ.

Մարզարհխորհրդի նախագահ
ԴԱՎԹՅԱՆ Ս. Ս.

Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար
ԱԹԱՋԱՆՅԱՆ Վ. Ա.

Ստեփանակերտի քաղաքային խորհրդի նախագահ
ՄԻՐԶՈՅԱՆ Մ. Մ.

Սոցիալիստական աշխատանքի հերոս
ԱՌԱՔԵԼՅԱՆ Ք. Ա.

ԼՂԻՄ կանանց խորհրդի նախագահ
ՍԱՀԱԿՅԱՆ Գ. Վ.

Էլեկտրատեխնիկական գործարանի դիրեկտոր
ԱՌՈՒՇԱՆՅԱՆ Բ. Ս.

Ղարմետաքսկոմբինատի դիրեկտոր
ԱԹԱՅԱՆ Ռ. Ե.

Կահույքի ֆաբրիկայի դիրեկտոր
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Է. Ս.

Տեղարդկոմբինատի դիրեկտոր
ԱՂԱՋԱՆՅԱՆ Ս. Ռ.

ՂՄԿ-ի կուսկոմի քարտուղար
ՔՈՉԱՐՅԱՆ Ռ. Ս.

Կոշիկի ֆաբրիկայի դիրեկտոր
ԱԹԱՋԱՆՅԱՆ Վ. Ա.

Մեծածախ առևտրի միավորման պետ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ռ. Ռ.

№ 9 շինտրեստի կառավարիչ
ԽՍՐԱՅԵԼՅԱՆ Ռ. Գ.

Ստեփքաղկոմի երկրորդ քարտուղար
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ Հ. Ա.

Ստեփքաղխորհրդի նախագահի տեղակալ
ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ. Գ.

Ստեփքաղկոմի քարտուղար
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Հ. Մ.

Ստեփքաղխորհրդի նախագահի տեղակալ
ԱՎԱԳԻՄՅԱՆ ՅՈՒ. Ն.

Պոլիգրաֆմիավորման գլխավոր դիրեկտոր
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՅՈՒ. Բ.

ք. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, ԼՂԻՄ
4 մայիսի, 1989թ.